ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Լեռնաձոր , թաղ . 2/21, հեռ (0285) 614-67 (094) 820923 էլ-հասցե lernadzorg@mail.ru

<< 26>> դեկտեմբերի 2016 թ. Ե 129

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի ավագանու 21.12.2016թ. թիվ 11 հերթական նիստի թիվ 42-Ա,43-Ն,44-Ն,45-Ա,46-Ն,47-Ն որոշումները:

Առդիր՝ 60 թերթ:

ԼԵՌՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Բ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԼԵՌՆԱԶՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ 11 09401457

10197
«26 12 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Լեռնաձոր, (094) 820923, (093) 963399, lernadzorg@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2016 թվականի N 42-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.12.2016Թ. ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝կողմ-4,դեմ-0,ձեռնպահ-0,համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել 2016թ. թիվ 11 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լեռնաձորի համայնքի ավագանու 23.12.2015թ. թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի համայնքապետարանի աշխատակազմի և <<Լեռնաձորի մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի վարչական տարածքում 2017թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լեռնաձորի համայնքի 2017թվականի բյուջեն հաստատելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՒՍԻԿ
4. ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍՏԵՓԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

21.12.2016թ.

գ.Լեռնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Լեռնաձոր, (094) 820923, (093) 963399, lernadzorg@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2016 թվականի N 43-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով և 53-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-4, դեմ-0, ձեռնպահ-0, համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՒՍԻԿ
4. ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՏԵՓԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

21.12.2016թ.

գ.Լեռնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ԼԵՌՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹԹ.

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմել է համայնքի ղեկավար Ս.Պետրոսյանը

Ընդունվել է համայնքի ավագանու

21.12. 2016թ. թիվ 43-Ն որոշմամբ

Գ.ԼԵՌՆԱՁՈՐ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 4

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 4

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը 5

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 8

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 9

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 10

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 11

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 13

3.1. Համայնքի զարգացման տեսլական 13

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 13

4. ՀԶԾ ֆինանսավորում 16

5. ՀԶԾ մոնիթորինգ 18

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Լեռնաձորի համայնքը իր վարչական տարածքով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի խոշոր համայնքներից մեկն է: Լեռնաձորի համայնքը ստեղծվել է 1996 թվականին Լեռնաձորի գյուղական խորհուրդի հիմքերի վրա: Այս տարիների ընթացքում համայնքապետարանի, «ՋՊՄԿ» ՓԲԸ-ի և ՋՊՄԿ Բարեգործական հիմնադրամի համագործակցության արդյունքում լուծվել են համայնքի ենթակառուցվածքների վերանորոգման, գույքի պահպանման, բնակչության հանգստի կազմակերպման հետ կապված մի շարք խնդիրներ: ՀՋԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները:

ՀՋԾ-ի մշակման համար հիմք են հանդիսացել համայնքի ֆինանսական միջոցների կանխատեսումը, իրավիճակների վերլուծությունը, նպատակների, արդյունքների, գործողությունների պլանավորումը:

Համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը միտված է լուծելու համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի և հանգստի կազմակերպման խնդիրները, ապահովելու համայնքի բնակավայրերի հավասար զարգացումը, ինչպես նաև նպաստելու գյուղատնտեսության զարգացմանը:

Սույն ծրագիրը մշակվել է համայնքի բնակիչների մասնակցությամբ հանրային բաց լսումների միջոցով:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Համայնքի վարչական տարածքում ընդգրկված բնակավայրերը՝ գ.Լեռնաձոր, Ձագեձոր /Մուսալամ/,Թավշուտ/ գ.Կավճուտ/, գ.Փուխրուտ, գ.Կաթնաոատ, Անդոկավան և Բարիկավան թաղամասերը: Պատմական աղբյուրներում Լեռնաձորը հիշատակվում է Քրդիկանց, Քյուրդիքյանդ, Դիլլաբ անուններով: Լեռնաձոր է վերանվանվել 1920-ականներին: Ներկայիս գյուղը կառուցվել է 1958թ. նախկին գյուղից 2 կմ հարավ-արևելք, նախկին Դիլլար-Տիրնիկ գյուղատեղիում: Մուսալամը և Կավճուտը մինչև 1989թ. բնակեցված էին ադրբեջանցիներով, նրանց արտագաղթից հետո վերաբնակեցվել են Ադրբեջանից բռնագաղթած փախստականներով:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 15808.20 հա, որից՝

Հողի նպատակային նշանակությունը	Ընդամենը (հա)	Համայնքային սեփ. (հա)	Պետական սեփ. (հա)	ֆիզիկական անձ. սեփ. (հա)	Իրավաբանական անձ. սեփ. (հա)
Գյուղատնտեսական	9183.51	7339.80	1834.86	8.85	-
Բնակավայրերի	207.98	110.41	1.43	96.14	-
Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական	138.51	24.91	109.01	0.3	4.29
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառ. օբյեկտ	43.97	12.9	28.83	-	2.25
Հատուկ պահպանվող տարածքներ	497.6	2.47	495.13	-	-
Անտառային	5577.18	-	5577.18	-	-
Ջրային	159.45	2.46	156.99	-	-
Ընդամենը	**15808.20**				

Համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 21կմ, իսկ համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ: Համայնքի կարգավիճակը՝ սահմանամերձ, լեռնային:

Լեռնաձոր համայնքում հաշվառված է 851 մարդ, առանց հաշվառման՝ 114 մարդ: Առկա բնակչությունը կազմում է 965 մարդ : Համայնքում կա 360 տնային տնտեսություն:

Տարիքը	Ընդամենը	Արական	Իգական
0-5	46	22	24
6-18	158	86	72
19-62	599	274	325
63 և ավելի	162	62	100
Ընդամենը	**965**	**444**	**521**

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2016թ համար կազմել է 6 8750 900 ՀՀ դրամ, որից ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 68.2%:

Համայնքում գործում են՝ «Գեղի-2» ՓՀԷԿ , «Ձագեձոր» ՓՀԷԿ և «Ողջի-2» ՓՀԷԿ, «Քաջարանի հողմաէլեկտրակայան» ձեռնարկությունները, որոնց արտադրանքը էլեկտրաէներգիան, սպառվում է ՀՀ-ում: Հարկ է նշել նաև, որ համայնքում գործում են երկու շինարարական ձեռնարկություն՝»Թունել» ՓԲԸ և «ԺԱՄՊ» ՍՊԸ, որոնք իրականացնում են շինարարական գործունեություն համայնքում և հարևան համայնքներում: Վերը նշված ձեռնարկություններում հիմնականում աշխատում են համայնքի բնակիչները:

Համայնքում է գործում չորս խանութ և մեկ հանրային սննդի օբյեկտ /ռեստորան/:Այլ ծառայություններ մատուցող ձեռնարկություններ չկան:

Համայնքում թույլ է զարգացած հողագործությունը, այգեգործությունը: Համայնքի վարչական տարածքում առկա խոտհարքները և արոտները նպաստավոր պայմաններ են ստեղծում անասնապահության զարգացման համար: Հողագործության և այգեգործության արդյունքում ստացված արտադրանքը հիմնականում ներքին սպառման և փոխանակման համար է: Համայնքի որոշ գյուղացիական տնտեսություններ զբաղվում են մանր եղջերավոր անասնապահությամբ, խոզաբուծությամբ և մեղվաբուծությամբ, որոնք իրենց արտադրանքը սպառում են հանրապետության շուկաներում:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում առկա անասնագլխաքանակը ունեցել հետևյալ ցուցանիշները.

Անվանում	Չափի միավորը	Քանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	գլուխ	183
Ոչխարներ	գլուխ	7320
Այծեր	գլուխ	224
Խոզեր	գլուխ	62
Թռչուններ	թև	1113
Մեղվաընտանիք	հատ	523

Ստորը բերված աղյուսակներում ներկայացված են 2016 թվականի ընթացքում գյուղատնտեսական արտադրանքի տեսակները և ծավալները.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքսը (հա)	Չափի միավորը	Քանակը
Կարտոֆիլ	29	ցենտներ	2686
Լոբի	8	ցենտներ	521
Բանջարեղեն	3	ցենտներ	385

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Չափի միավորը	Քանակը
Կաթ	լիտր	375000
Միս	տոննա	62,5
Ձու	հատ	180000
Մեղր	կգ	2250

Համայնքի Լեռնաձոր գյուղում կա երկու եկեղեցի, որից սբ Աստվածածինը (17 դ.) կանգուն է,իսկ սբ.Գևորգ եկեղեցին (12դ.) կիսաքանդ է: Համայնքի Փուխրուտ գյուղի սբ.Ստեփանոս (17դ.) եկեղեցին կանգուն է: Համայնքի Անդոկավան թաղամասում են գտնվում Դավիթ–Բեկի բերդը և Զեյվու կամուրջը (10դ.), Բաղակու ամրոցը (4դ.) կիսաքանդ վիճակում: Համայնքի տարածքում կան նաև էնեոլիթ-վաղ բրոնզի դարի ժամանակաշրջանի բնակատեղի և դամբարանադաշտ: Համայնքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են էկոտուրիզմի զարգացման համար:

Համայնքում գործում են չորս դպրոցներ: Լեռնաձոր գյուղում գործում է «Լեռնաձորի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը: Դպրոցի շենքը տիպային է, նախատեսված 192 աշակերտի համար, ունի վերանորոգման կարիք: Ներկայումս դպրոցում սովորում է 42 աշակերտ:

Ձագեձոր գյուղում գործում է «Ձագեձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը: Դպրոցի շենքը տիպային է, նախատեսված 300 աշակերտի համար,ունի մասնակի վերանորոգման կարիք (արհեստանոցի կապիտալ վերանորոգում), չունի հանդիսությունների դահլիճ: Ներկայումս դպրոցում սովորում է 51 աշակերտ:

Բարիկավան թաղամասում գործում է «Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը: Դպրոցի շենքը տիպային է, նախատեսված 320 աշակերտի համար, ունի մասնակի վերանորոգման կարիք : Ներկայումս դպրոցում սովորում է 31 աշակերտ:

Անդոկավան թաղամասում գործում է «Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը: Դպրոցի շենքը հին տիպային է հարմարեցված, նախատեսված 110 աշակերտի համար,ունի կապիտալ վերանորոգման կարիք: Ներկայումս դպրոցում սովորում է 10 աշակերտ:

Լեռնաձոր գյուղում գործում է նաև «Լեռնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը: Մանկապարտեզի շենքը հարմարեցված է. նախկին գյուղական խորհրդի շենքն է, նախատեսված է 30 երեխայի համար: 2007 թվականին «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից մանկապարտեզը վերանորոգվել է: Մանկապարտեզը մասնակի վերանորոգման կարիք ունի: Մանկապարտեզ հաճախում է 10 երեխա:

Համայնքում կա չորս բուժկետ, որոնք 2000 թվականին «Առաքելություն Արևելք» դանիական մարդասիրական կազմակերպության կողմից վերանորոգվել և գույքով ապահովվել են: Բուժկետերում աշխատում են երկու բուժքույր,որոնք սպասարկում են համայնքի բնակչությանը:

Համայնքի 17 ընտանիքներ (ընդամենը 49 մարդ, որից՝ 27 երեխա) գրանցված են ընտանեկան նպաստների համակարգում:

Համայնքի աշխատանքային տարիքի բնակչության զգալի մասը աշխատում է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ում, համայնքի տարածքում գործող հիմնարկ–ձեռնարկություններում, մի մասը ինքնազբաղված են գյուղատնտեսական աշխատանքներով: Համայնքում գործազուրկները կազմում են բնակչության 10%: Գործազուրկները Բարիկավան և Անդոկավան թաղամասերի բազմաբնակարան շենքերի բանկիչներ են, որոնք չունեն սեփական և վարձակալած հողամաս:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար բյուջեների ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրվող տարեկան 16 638 000 ՀՀ դրամ դոտացիան հիմնականում ուղղվելու է ապարատի պահպանման ծախսերին:

Լեռնաձոր համայնքը գալիք հինգ տարիների ընթացքում հարևան համայնքների հետ համատեղ նպատակային ծրագրեր և միջոցառումներ չի պլանավորում:

Լեռնաձորի համայնքում միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների կողմից իրականացվող ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:

Լեռնաձոր համայնքում մասնավոր ընկերության՝ «ՋՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից մշտապես իրականացվում են ծրագրեր:

Շարունակական ծրագրերից է Լեռնաձոր գյուղի աղբահանության կազմակերպումը: Գալիք հինգ տարիների ընթացքում այդ համագործակցության շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Լեռնաձոր գյուղի հանդիսությունների դահլիճի կապիտալ վերանորոգում
2. Լեռնաձոր գյուղի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ,
3. Ձագեձոր գյուղի խմելաջրի խողովակաշարի կառուցում
4. Բարիկավան թաղամասում շենքերի նկուղային հարկերում խմելաջրի և կոյուղագծի վերանորոգում
5. Բարիկավան թաղամասում մանկական խաղահրապարակի կառուցում
6. Թավշուտ գյուղում բաց և փակ խաղասրահի կառուցում
7. Թավշուտ գյուղում ներհամայնքային փողոցների վերանորոգում, ասֆալտապատում
8. Անդոկավան թաղամասի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում,
9. Անդոկավան թաղամասի փողոցային լուսավորության անցկացում:

Նշված ծրագրերի իրականացման արդյունքում համայնքում կլուծվի մի շարք խնդիրներ՝այդ թվում համայնքի բնակիչների սոցիալ–տնտեսական պայմանների բարելավում, մշակութային կյանքի և հանգստի կազմակերպում:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Ստորև բերված դյուսակում ներկայացված է համայնքի բյուջեն՝ եկամտային և ծախսային մասերով, իսկ կանխատեսումները կատարվել են % տարվա կտրվածքով:

Եկամտային մաս	Ելակետային տարի 2016	2017 Նախ.	2018 Կանխ.	2019 Կանխ.	2020 Կանխ.	2021 Կանխ.
Ընդամենը եկամուտներ	**68750900**	**50362000**	**45062000**	**35062000**	**35362000**	**40362000**
Հողի հարկ	265000	265000	265000	265000	265000	265000
Գույքահարկ	1355000	1600000	1600000	1600000	1600000	1600000
Հողի վարձակալություն	15455000	14700000	14700000	14700000	14700000	14700000
Տեղական տուրք	159000	159000	159000	159000	159000	159000
Դոտացիա	15852500	16638000	16638000	16638000	16638000	16638000
սուբվենցիա	6403400		5000000			5000000
Այլ մուտքեր	500000	300000				
ֆոնդային բյուջեի ազատ մնացորդ	28761000	16700000	6700000	1700000	2000000	2000000
Ծախսային մաս						
Ընդամենը ծախսեր	**68750900**	**50362000**	**45062000**	**35062000**	**35362000**	**40362000**
Ապարատի պահպանում	49598100	38162000	32882000	22882000	22982000	22982000
Սուբսիդիա	7500000	7500000	7500000	7500000	7500000	7500000
Մշակույթ	1300000	1000000	1000000	1000000	1000000	1000000
Արտաքին լուսավորություն	2430000	2000000	2000000	2000000	2200000	2200000
Պահուստայի և ֆոնդ	1950000	1700000	1680000	1680000	1680000	1680000
Շրջակա միջավայր	5972800		5000000			5000000

Լեռնաձոր համայնքի զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցների մի մասը կհատկացվի համայնքի բյուջեից ,իսկ մյուս մասը կիրականացվի «ՋՊՄԿ» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ:

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Լեռանձոր համայնքի վարչական տարածքում ընդգրկված բնակավայրերի խնդիրները տարբեր են և առնչվում են գույքի պահպանմանը, նախադպրոցական և դպրոցական դաստիարակությանը, սոցիալական պաշտպանությանը, մշակույթային և մարզական կյանքի կազմակերպմանը, ճանապարհների և այլ ենթակառուցվածքների պահպանությանը, բարեկարգմանը և աղբահանությանը:

1/ Լեռնաձոր գյուղը հանդիսանում է Լեռնաձոր համայնքի կենտրոնը:Այստեղ են գտնվում համայնքապետարանը,ակումբ –գրադարանը ,մանկապարտեզը:

Լեռնաձոր գյուղի ներհամայնքային ճանապարհների որոշ հատվածները կիսաքանդ են և չունեն ծածկույթ :Գյուղում առկա է փողոցային լուսավորություն, սակայն որոշ թաղամասերում այն բացակայում է:Գյուղի հանդիսությունների դահլիճը կապիտալ վերանորոգման կարիք ունի:

2/ Համայնքի Կաթնառատ գյուղի հեռավորությունը համայնքի կետրոնից 4կմ է,իսկ Փուխրուտ գյուղի հեռավորությունը 5կմ :Նշված գյուղեր տանող ճանապարհների որոշ հատվածներ ծածկույթ չունեն և ձմռանը դառնում են դժվար անցանելի:

3/ Լեռնաձոր համայնքի Ձագեձոր գյուղի /հեռավորությունը համայնքի կենտրոնից 3կմ/ որոշ թաղամասերում չկա փողացային լուսավորություն : Գյուղում կա նաև խմելաջրի խնդիր:

4/ Լեռնաձոր համայնքի Թավշուտ գյուղի/հեռավորությունը համայնքի կենտրոնից 5կմ/ ակումբ–գրադարանը չի գործում շենքի անմխիթար վիճակի պատճառով : Գյուղի խմելաջրի խողովակաշարը և ներքին ցանցը քայքայված է : Ներհամայնքային ճանապարհների որոշ հատվածներ ծածկույթ չունեն:

5/ Համայնքի Բարիկավան թաղամասում /հեռավորությունը համայնքի կենտրոնից 4կմ/ կա երեք հինգ հարկանի բազմաբնակարան շենք:Նշված շենքերում անհրաժեշտ է վերանորոգել խմելաջրի խողովակները և կոյուղագիծը:Թաղամասում կան նախադպրոցական տարիքի երեխաներ,որոնք նախադպրոցական ուսումնական հաստատություններ չեն հաճախում հեռավորության պատճառով: Չկան նաև երեխաների համար նախատեսված խաղահրապարակներ:

6/ Համայնքի Անդրկովան թաղամասում /հեռավորությունը համայնքի կենտրոնից 7կմ/ կա երկու երկհարկանի բազմաբնակարան շենք,կառուցված 1950թ: Նշված շենքերի տանիքները և աստիճանավադակները գտնվում են անմխիթար վիճակում:Թաղամասում չկա նաև փողոցային լուսավորություն:

Համայնքի որոշ բնակավայրերում ջուրը սակավ է ,ինչը խոչընդոտում է գյուղատնտեսության զարգացմանը:

Լեռնաձորի համայնքը չունի գլխավոր հատակագիծ, գերեզմատների հատակագծեր և աղետների, ռիսկերի նվազեցման քարտեզներ: Նշված պարտադիր խնդիրների կատարման համար համայնքը չունի բավարար ֆինանսական միջոցներ:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Ստորև ներկայացված է Լեռնաձոր համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծությունը.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1/ Աշխարհագրական դիրքը 2/Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից 21կմ է, Մ-2 միջպետական ճանապարհից 0.03 կմ, 3/Համայնքի գազաֆիկացվածության աստիճանը 90%,հեռախոսակապի և հեռուստակայանի առկայություն 90% 4/ՀՀ պետական կառավարման մարմինների ճյուղային ստորաբաժանումների մոտ տեղակայվածությունը 5/Համայնքում գործող հիմնարկ-ձեռնարկությունների առկայությունը և զբոսաշրջության զարգացման հնարավորությունը 6/Համայնքի աշխատանքային տարիքի բնակչության զգալի մասի զբաղվածությունը 7/Համայնքի տարածքով անցնող Քաջարան-Կապան ուղևորափոխադրող կանոնավոր երթուղու առկայություն	1/ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը 2/համայնքի բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից 3/բնակավայրերի ներսում թաղամասերի իրարից հեռավորությունը 4/կախվածությունը համայնքին մոտ գործող արդյունաբերական մասնավոր ընկերությունից՝ <<ԶՊՄԿ>>ՓԲԸ-ից :
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
1/Համայնքի բնակլիմայական պայմանները,աշխարհագրական դիրքը և մշակույթային արժեքների առկայությունը/հին	1/ շենքերի տանիքի վթարային վիճակ /Անդրկովան թաղամասի երկու բազմաբնակարան շենքերը/

եկեղեցիներ,բերդեր բնակավայրեր/ հնարավորություններ է ստեղծում զբոսաշրջության զարգացման համար: 2/Անասնապահության զարգացման համար խոտհարքների և արոտավայրերի առկայություն:	2/Թավշուտ գյուղից 3կմ հեռավարության վրա տեղակայված Գեղիի ջրամբարը, 3/Համայնքի խմելի ջրի ներհամայնքային համակարգի մաշվածությունը: 4/Ճանարահամերձ հատվածում քարաթափումների վտանգը 5/<<ՋՊՄԿ>>ՓԲԸ-ի չգործող երեք պոչամբարների առկայությունը: 6/Էկոլոգիական աղտոտվածություն/համայնքը հանդիսանում է <<ՋՊՄԿ>>ՓԲԸ-ի ազդակիր համայնք/

3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1Համայնքի զարգացման տեսլական

Առաջիկա հինգ տարիների ընթացքում ՀԶԾ-ով նախատեսվում է իրականցնել պարտադիր խնդիրների լուծմանը ուղղված մի շարք ծրագրեր,որի արդյունքում կբարելավվի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, կենցաղային պայմանները,կխթանվի գյուղատնտեսական մթերքի արտադրությունը, լավագույն պայմաններ կստեղծվեն համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և ֆիզիկական պատրաստության համար,կաշխուժանա համայնքի մշակույթային կյանքը, համայնքը կդառնա ավելի մաքուր ու բարեկարգ, կբարելավվի էկոլոգիական վիճակը:

Համայնքում աղքատության շեմից ցածր է գտնվում 17 ընտանիք (ընդամենը 49 մարդ, որից 27 երեխա), որը կազմում է համայնքի ընտանիքների ընդհանուր թվի 4%-ը: Հինգ տարիների ընթացքում ակնկալվում է այս ցուցանիշը նվազեցնել առնվազը 1%-ով:

Համայնքի սեփական եկամուտների 2016 թվականի բարձր ցուցանիշը (68.2%) պայմանավորված է բյուջեի ֆոնդային մասում մեծ մնացորդով (28761000ՀՀ դրամ): 2016 ընթացքում ֆոնդային բյուջեի միջոցներով իրականացվել են մի շարք ծրագրեր: Գալիք հինգ տարիների ընթացքում սեփական եկամուտների զգալի աճ չի կանխատեսվում:

Համայնքի հաշվառված բնակչության թիվը նախորդ տարիների համեմատությամբ նվազել է 1%-ով, սակայն ավելացել է փաստացի, առանց հաշվառման բնակվողների թվաքանակը: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացվելիք ծրագրերի արդյունքում կանխատեսվում է բնակչության աճ:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները

Համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով կիրականացվեն հետևյալ ծրագրերը՝

	Պարտադիր խնդիր	Ծրագիր	Ծրագրի արդյունք
1	**Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում**	1. Լեռնաձոր գյուղի հանդիսությունների դահլիճի կապիտալ վերանորոգում	Հանդիսությունների դահլիճում կազմակերպվող միջոցառումների թվի աճ

2.	**Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն**	1. Նախադպրոցական կրթություն /սուբվենցիա մանկապարտեզին	Մանկապարտեզ հաճախող երեխաների քանակի աճ
3	**Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ**	1.Թավշուտ գյուղում խաղասրահի կառուցում	Թավշուտ գյուղի բնակիչների ակտիվ ժամանցի ռացիոնալ կազմակերպում
		2.Մշակույթային միջոցառումների կազմակերպում	Համայնքում մշակույթային կյանքի բարելավում
4	**Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն**	1.Սոցիալական նպաստներ	Համայնքում կարիքավոր ընտանիքներին ֆինանսական աջակցություն
5	**Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը**	Բարիկավան թաղամասում մանկական խաղահրապարակի կառուցում	Բարիկավան թաղամասի նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության կազմակերպում
6	**Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը**	1.Զագեձոր գյուղում 2,8կմ երկարությամբ խմելաջրի խողովակաշարի կառուցում	Զագեձոր գյուղի բնակչության ապահովումը խմելաջրով: Բանջարաբոստանային կուլտուրաների մշակման հարավորություն :
		2.Լեռնաձոր համայնքի աղբահանություն	Համայնքի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավում:
		3.Բարիկավան թաղամասի բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերում խմելաջրի խողովակաշարի և կոյուղագծի վերանորոգում	Բարիկավան թաղամասի բազմաբնակարան շենքերի բնակիչների կենցաղային պայմանների բարելավում:

		4.Անդրկավան թաղամասի բազմաբնակարան շենքերի տանիքի նորոգում	Անդրկավան թաղամասի բազմաբնակարան շենքերի բնակիչների կենցաղային պայմանների բարելավում:
		5 Անդրկավան թաղամասի փողոցային լուսավորության անցկացում	Անդրկավան թաղամասի բնակիչների համար բարեկարգ միջավայրի ստեղծում:
		6.Արտաքին լուսավորություն	Համայնքի բարեկարգ միջավայրի շարունակական պահպանում:
7	**Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում**	1.Լեռնաձոր գյուղի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում	Լեռնաձոր գյուղի ենթակառուցվածքների բարելավում
		2 Թավշուտ գյուղի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում	Թավշուտ գյուղի ենթակառուցվածքների բարելավում
8	**Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն**	1.Բնակավայրերի կանաչապատում	Համայնքում կանաչապատ տարածքների ավելացում, էկոլոգիական վիճակի բարելավում

4.ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Լեռնաձոր համայնքի զարգացման ծրագրում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից (դոտացիա,սուբվենցիա)
- Բարեգործություններից (ՋՊՄԿ բարեգործական հիմնադրամ)
- Մասնավոր ընկերությունների ներդրումներից («ՋՊՄԿ» ՓԲԸ)

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի ֆինանսավորման վերլուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

N	Ծրագրի անվանումը	2017թ.			Ֆինանսական աղբյուրների առկայությունը
		Համայնքի բյուջե	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն	Բարեգործություն	
1	Թավշուտ գյուղում խաղասրահի կառուցում	5 մլն	-		առկա է
2	Ձագեձոր գյուղում 2.8 կմ երկարությամբ խմելաջրի խողովակաշարի կառուցում	5մլն		1.5 մլն	առկա է
3	Բարիկավան թաղամասի բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերում խմելաջրի խողովակաշար և կոյուղագծի վերանորոգում	2 մլն			առկա է
		2018թ.			
4	Բարիկավան թաղամասում մանկական խաղահրապարակի կառուցում	1.5 մլն			առկա է

5	Լեռնաձոր գյուղի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում		7 մլն		Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ
6	Բնակավայրերի կանաչապատում		5մլն		
			2019թ.		
7	Անդոկավան թաղամասի բազմաբնակարան շենքերի տանիքի նորոգում		18մլն		Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ
			2020թ.		
8	Թավշուտ գյուղի ներհամայնքային ճանապարների վերանորոգում			6մլն	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ
9	Անդոկավան թաղամասի փողոցային լուսավորության անցկացում		8.5մլն		Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ
			2021թ.		
10	Լեռնաձոր գյուղի հանդիսությունների դահլիճի կապիտալ վերանորոգում		23մլն		
11	Բնակավայրերի կանաչապատում		5մլն		

ՀԶԾ-ում ընդգրկված շարունակական ծրագրերը հետևյալներն են.

N	Ծրագրի անվանումը	2017-2021թթ.		Ֆինանսական աղբյուրների առկայությունը
		Համայնքի բյուջե	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն	
1	Արտաքին լուսավորություն	10.4մլն		առկա է
2	Նախադպրոցական կրթություն	37.5մլն		առկա է

	/սուբվենցիա մանկապարտեզին			
3	Լեռնաձոր համայնքի աղբահանություն		20մլն	առկա է

Լեռնաձոր համայնքի 2017 թվականի ֆոնդային բյուջեի 16 700 000 ՀՀ դրամ գումարը և տարեսկզբի ազատ մնացորդը՝ 4 000 000 ՀՀ դրամը կուղղվեն ՀՋԾ-ի հետևյալ ծրագրերի իրականացմանը՝

1.2017թ-ի ընթացքում

ա/ Թավշուտ գյուղում խաղասրահի կառուցում - 5մլն ՀՀ դրամ

բ/ Ձագեձոր գյուղում 2.8 կմ երկարությամբ խմելաջրի խողովակաշարի կառուցում

- 5մլն

գ/ Բարիկավան թաղամասի բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերում խմելաջրի խողովակաշարի և կոյուղագծի վերանորոգում - 2մլն ՀՀ դրամ:

2.2018թ-ի ընթացքում

ա/ Բարիկավան թաղամասում մանկական խաղահրապարակի կառուցում - 1.5մլն ՀՀ դրամ

ՀՋԾ-ում ընդգրկված «Բնակավայրերի կանաչապատում» ծրագիրը կիրականացվի Լեռնաձորի համայնքին որպես ազդակիր համայնք տրամադրվող բնապահպանական վճարներից:

ՀՋԾ-ով իրականցվելիք մնացած ծրագրերի ֆինանսավորումը ակնկալվում է այլ աղբյուրներից,այդ ուղղությամբ ընթանում են բանակցություններ:

5.ՀՋԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՋԾ մոնիթորինգը ամփոփվել է համաձայն ՀՋԾ-ի մոնիթորինգի անձնագրի, որը ներկայացված է կից

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Նախադպրոցական կրթություն/սուբսիդիա մանկապարտեզին »
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ Սուբսիդիա <<Լեռնաձորի մանկապարտեզ >>ՀՈԱԿ-ին պահպանման ծախսերի համար</td><td colspan="7">Մանկապարտեզի անխափան աշխատանքի ապահովում</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>100%</td><td>100%</td><td>100%</td><td>100%</td><td>100%</td><td>100%</td></tr>
<tr><td rowspan="6">Ծրագրի միջանկյալ արդյունքներ Մանկապարտեզ հաճախող երեխաների քանակի աճ</td><td colspan="7">1. Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվ</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>10</td><td>12</td><td>13</td><td>16</td><td>16</td><td>20</td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Բյուջեի կազմում
1.2. Մուտքերի ապահովում
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.
2.2.</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 37,5 մլն ՀՀ դրամ
Կապիտալ ծախսեր՝
Ընդհանուր բյուջեն՝37,5մլն ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Եկամուտների նվազումը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Երեխաների ծնողներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Լեռնաձորի մանկապարտեզը գործում է 1985 թվականից և երբևիցե չի դադարեցրել իր գործունեությունը: Նախատեսված 30 երեխաների փոխարեն մանկապարտեզ հաճախում են 10 երեխա: Լեռնաձորի համայնքապետարանը պլանավորում է 2017-2021թթ 37500000 ՀՀ դրամ սուբսիդիա հատկացնել<< Լեռնաձորի մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ին շարունակական գործունեության համար:</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Լեռնաձոր գյուղի հանդիսությունների դահլիճի կապիտալ վերանորոգում »
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ Լեռնաձոր գյուղի հանդիսությունների դահլիճը շագործման համար պիտանի դարձնելն և սանիտարահիգենիկ պայմանների ապահովումն է</td><td colspan="7">Հանդիսությունների բարեկարգ դահլիճ</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>30%</td><td></td><td></td><td></td><td></td><td>100%</td></tr>
<tr><td rowspan="7">Ծրագրի միջանկյալ արդյունքներ Համայնքի բնակչության համար վերանորոգված հանդիսությունների դահլիճից օգտվելու հնարավորություն ստեղծել</td><td colspan="7">1. Լեռնաձորի հանդիսությունների դահլիճում կազմակերպված միջոցառումների թիվը</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>5</td><td></td><td></td><td></td><td></td><td>30</td></tr>
<tr><td colspan="7">2. Աշխատատեղերի ստեղծում</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0մարդ</td><td></td><td></td><td></td><td></td><td>3 մարդ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Ֆինանսական միջոցների ներգրավում
1.2. Նախագծի պատվիրում
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1. Աշխատուժի ներգրավում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝
Կապիտալ ծախսեր՝ 23մլն ՀՀ դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 23մլն ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Բանակցություններ մասնավոր ընկերության հետ Ֆինանսական միջոցների և աշխատանքների ձեռք բերման շուրջ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Շինարարական նյութերի և աշխատանքների կտրուկ թանկացում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2021թ</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Լեռնաձորի հանդիսությունների դահլիճը նախատեսված է համայնքում միջոցառումների կազմակերպման համար:Շենքը մասնակի վերանորոգվել է 2002 թվականին <<ԶՊՄԿ>> ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ:Ներկայումս շենքը գտնվում է անմխիթար վիճակում,որի պատճառով կտրուկ նվազել է այնտեղ կազմակերպվող միջոցառումների թիվը:2021 թվականին Լեռնաձորի համայնքապետարանը պլանավորում է մասնավոր ընկերության հետ համագործակցությամբ կապիտալ վերանորոգել Լեռնաձոր գյուղի հանդիսությունների դահլիճը:</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Թավշուտ գյուղում խաղասրահի կառուցում »
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ Թավշուտ գյուղում խաղասրահի կառուցումն և բնակչության ակտիվ ժամանցի կազմակերպումն է</td><td colspan="7">Խաղասրահի կառուցում</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0 հատ</td><td>1 հատ</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="7">Ծրագրի միջանկյալ արդյունքներ Թավշուտ գյուղի բնակիչների ակտիվ ժամանցի ռացիոնալ կազմակերպում</td><td colspan="7">1. Թավշուտ գյուղի բնակիչների բավարավածությունը ակտիվ ժամանցի կազմակերպումից</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0%</td><td>80%</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Նախագծի պատվիրում
1.2.Մրցույթի հայտարարում
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Շինարարական կազմակերպության հետ պայմանագրի կնքում
2.2.</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝
Կապիտալ ծախսեր՝ 5 մլն ՀՀ դրամ
Ընդհանուր բյուջեն՝</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Թավշուտ գյուղի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017թ</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Թավշուտ գյուղում բնակվում է 84 մարդ:Գյուղի բնակչության համար չկա ակտիվ ժամանցի կազմակերպման պայմաններ:2017 թվականին Լեռնաձոր համայնքի ֆոնդային բյուջեից պլանավորվում է 5000000 ՀՀ դրամ հատկացնել Թավշուտ գյուղում խաղասրահ կառուցելու համար:</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Մշակույթային միջոցառումների կազմակերպում »
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ Մշակույթային միջոցառումների կազմակերպում</td><td colspan="7">Մշակութային կյանքի ակտիվացում</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>80%</td><td>100%</td><td>100%</td><td>100%</td><td>100%</td><td>100%</td></tr>
<tr><td rowspan="6">Ծրագրի միջանկյալ արդյունքներ Համայնքում մշակույթային կյանքի բարելավում</td><td colspan="7">1. Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թվի աճ</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>6</td><td>8</td><td>8</td><td>8</td><td>8</td><td>8</td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Բյուջեի կազմում
1.2.Մուտքերի ապահովում
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Պայմանագրերի կնքում
2.2</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 5մլն ՀՀ դրամ
Կապիտալ ծախսեր՝
Ընդհանուր բյուջեն՝</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Աշակերտական խմբակների ներգրավում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Եկամուտների ոչ բավարար հավաքագրում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Լեռնաձոր համայնքում տոնական և հիշատակի օրերի կապակցությամբ պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ:Միջոցառուների կազմակերպումը ֆինանսավորվում է համայնքի բյուջեից:Լեռնաձորի2017-2021թթ համայնքապետարանը պլանավորում է բյուջեից նշված ծրագրի համար հատկացնել 5 մլն դրամ:</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Սոցիալական նպաստներ »
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն</td></tr>
<tr><td rowspan="3">Ծրագրի անմիջական նպատակ սոցիալական նպաստների տրամադրում համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին</td><td colspan="7">Սոցիալական նպաստներ</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>0.3 մլն դրամ</td><td>0.5 մլն դրամ</td><td>0.5 մլն դրամ</td><td>0.5 մլն դրամ</td><td>0.5 մլն դրամ</td><td>0.5 մլն դրամ</td></tr>
<tr><td rowspan="6">Ծրագրի միջանկյալ արդյունքներ Համայնքում կարիքավոր ընտանիքներին ֆինանսական աջակցություն</td><td colspan="7">1. սոցիալական օգնությունից օգտվողների թվի աճ</td></tr>
